


**ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**



- Մարզկենտրոնը՝**
ք. Եղեգնաձոր
- Տարածաշրջանները՝**
Վայք,
Եղեգնաձոր
- Քաղաքները՝**
Եղեգնաձոր,
Ջերմուկ,
Վայք

Տարածքը	2 308 քառ. կմ
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը	7.8%
Քաղաքային համայնքներ	3
Գյուղական համայնքներ	41
Քաղաքներ	3
Գյուղեր	52
Բնակչության թվաքանակը 2012թ. տարեվերջին	52.2 հազ. մարդ
այդ թվում՝	
քաղաքային	18.4 հազ. մարդ
գյուղական	33.8 հազ. մարդ
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2012թ.	1.7 %
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը	35.2 %
Գյուղատնտեսական նշանակության հողեր	191 626.2 հա
այդ թվում՝ վարելահողեր	16 209.0 հա

ՀՀ Վայոց ձորի մարզը գտնվում է հանրապետության հարավային հատվածում: Մարզը պետական սահմանով հարավում սահմանակից է Նախիջևանին, հյուսիսում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզին, արևելքում՝ ՀՀ Սյունիքի մարզին և արևմուտքում՝ ՀՀ Արարատի մարզին:

ՀՀ Վայոց ձորի մարզը շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով նրա և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն:

ՀՀ Վայոց ձորի մարզն ունի կենդանական և բուսական բազմազան աշխարհ: Տարածքի 5.7%-ը կամ 13 240.1 հա կազմում են բնական անտառները:

Արտակարգ խայտաբղետ է մարզի մակերևույթը: Հրաբխային ուժերը, երկրաշարժերը, Արփա գետի և դրա վտակների ջրերն առաջացրել են տարբեր ուղղություններով ձգվող բազմաթիվ լեռնաշղթաներ՝ մեծ ու փոքր գագաթներով, խորհրդավոր ձորեր, լեռնանցքներ, սարահարթեր, գոգավորություններ, դաշտեր, մարգագետիններ և բնական բազմապիսի կերտվածքներ, որի ամենավառ օրինակն է Ջերմուկի հիասքանչ ջրվեժը (60 մ):

ՀՀ Վայոց ձորի մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Օդի առավելագույն աստիճանը հարավային շրջաններում հասնում է +41°C-ի, իսկ բացարձակ նվազագույնը՝ -35° C-ի: Տեղումները կազմում են տարեկան 300-ից 700 մմ:

2012թ.-ին **մարզի տնտեսության հիմնական հատվածների** տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.8 %,
- գյուղատնտեսություն՝ 2.2 %,
- շինարարություն՝ 1.2 %,
- մանրածախ առևտուր՝ 0.3 %,
- ծառայություններ՝ 0.4 %.

Մարզի **տնտեսության** ընդհանուր ծավալում գերակշռողը գյուղատնտեսությունն է: Գյուղացիական տնտեսությունները հիմնականում զբաղվում են անասնաբուծությամբ, որի արտադրանքը կազմել է գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի 64.5%-ը: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալում որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև թռչնաբուծությունը, խաղողագործությունը, պտղաբուծությունը և բանջարաբուծությունը:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են ոչ ոգելից ըմպելիքի՝ «Ջերմուկ» հանքային ջրերի և խաղողի գինու արտադրությունները:

Բեռնատղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզով է անցնում ՀՀ-ն Իրանի հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության հեռանկարային զարգացման գործում:

Մարզում ակնհայտ են **ներքին և արտաքին զբոսաշրջության** զարգացման մեծ հեռանկարները:

Եղեգնաձոր քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 7.9 հազ. բնակիչ) համարվում է պատմական Սյունիքի հնագույն բնակավայրերից մեկը և գտնվում է Երևանից 123 կմ հեռավորության վրա:

Եղեգնաձոր քաղաքի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռող ոլորտներն են **արդյունաբերությունն ու շինարարությունը**:

Արդյունաբերության ոլորտում հիմնականում զարգացած են խաղողի գինու, էլեկտրասարքավորանքի արտադրությունները, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունները:

Վայք քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 5.9 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ, մարզկենտրոնից՝ 16 կմ հեռավորության վրա:


Վայք քաղաքի տնտեսության հիմնական ճյուղն **արդյունաբերությունն է**: Հիմնականում զարգացած են հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների, շինանյութերի, ձեռագործ գորգերի արտադրությունները:

Ջերմուկ քաղաքը (2012թ. տարեվերջին՝ 4.6 հազ. բնակիչ) գտնվում է 2 070 մ բարձրությամբ լավային սարավանդի վրա (հեռավորությունը Երևանից՝ 175 կմ, մարզ-կենտրոնից՝ 53 կմ): Ջերմուկը լայն ճանաչում ունի որպես առողջարանային քաղաք: Ճանաչված առողջարաններ են. «Ջերմուկը», «Նոր կյանքը», «Գլաձորը», «Աղաջանյանի անվ. առողջարանը» և «Արարատը»:

Քաղաքի անվանումը կապված է հանքային տաք աղբյուրների՝ ջերմուկների հետ:

Ջերմուկ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը ոչ ոգելից ըմպելիքի, **«Ջերմուկ» հանքային ջրի**, արտադրությունն է:

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ, 2013թ. հունվարի 1-ի դրությամբ %



ՄԱՆՐԱՍՄԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը այդ թվում՝	234	210	265	229	227
խանութներ	145	120	172	161	159
կրպակներ	59	59	59	46	46
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	1	1	1	1	1
սպառողական ապրանքների շուկաներ	1	1	-	-	-
առևտրի այլ օբյեկտներ	28	29	33	21	21

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2008	2009	2010	2011	2012
Պետական նախադպրոցական	17	17	17	17	18
Պետական հանրակրթական	50	51	51	51	50
Ոչ պետական հանրակրթական	1	1	1	1	1
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	7	7	8	7	7
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	-	1	1	1	1
Պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1
Ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	2	2	2	1	2
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	1	1	1	1	1
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ *
Եղեգնաձոր	ք. Եղեգնաձոր	7 944
Վայք	ք. Վայք	5 870
Ջերմուկ	ք. Ջերմուկ	5 566
	ք. Կեչուտ	

ԳՑՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ **
1	Ագարակաձոր		1 414
2	Ագատեկ		567
3	Աղավնաձոր		2 054
4	Աղնջաձոր		476
5	Արենի	•Արենի •Ամաղու	1 897
6	Արին		283
7	Արտաբույնք		1 160
8	Արտավան		283

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

* Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի քաղաքային համայնքների բնակչության թվաքանակը ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ:

** Այստեղ և հետայսու՝ ՀՀ մարզերի գյուղական համայնքների այս տվյալների սկզբնաղբյուրը՝ գյուղական համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» պետական վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 866 գյուղական համայնքների մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ ըստ մարզերի ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության վարչական ռեգիստրների տվյալների վրա (շեղումը՝ 01.01.2013թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +12.1%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գուղական համայնքների միջև խնդրո առարկա տեղեկատվության փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ**
9	Արփի		1 278
10	Բարձրունի		460
11	Գետափ		2 399
12	Գլաձոր		2 748
13	Գնդեվազ		1 002
14	Գնիշիկ	•Գնիշիկ •Մոզրով	190
15	Գողթանիկ		217
16	Գոմք	•Գոմք •Ախտա •Կապույտ	250
17	Ելփին		1 335
18	Եղեգիս		510
19	Զառիթափ	•Զառիթափ •Հորադիս	1 515
20	Զեղեա		196
21	Թառաթումբ		555
22	Խաչիկ		1 007
23	Խնձորուտ		539
24	Կարմրաշեն		291
25	Հերիեր		804
26	Հերմոն	• Հերմոն •Արատես •Կայասար	221
27	Հորբատեղ		252
28	Հորս		297
29	Մալիշկա		5 389
30	Մարտիրոս		698
31	Նոր Ազնաբերդ		170
32	Շատին		2 060
33	Չիվա		1 035
34	Ռինդ		1 493
35	Սալլի		242
36	Սարավան	•Սարավան •Ուղեձոր	276
37	Սերս		204
38	Վարդահովիտ	•Վարդահովիտ •Գետիկվանք •Սևաժառ	218
39	Վերնաշեն		1 321
40	Փոռ		128
41	Քարագլուխ		889

**ՀՀ ՎԱՅՈՑ ԶՈՐԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2012թ.**

	Ընդամենը	նրանցից՝	
		կանայք ¹	տղա- մարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 078	4 922
Ծնվածներ, մարդ	120	54	66
Մահացածներ, մարդ	95	47	48
Ամուսնություններ	71	X	X
Ամուսնալուծություններ	10	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	44.4	X	X
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝			
նախադպրոցական	181	89	92
հանրակրթական	1 320	619	701
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	172	111	61
նախնական մասնագիտական (արհեստագործական)	19	6	13
միջին մասնագիտական	50	30	20
բարձրագույն մասնագիտական	46	29	17
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընացքում (հաճախումների քանակը)	36 055
Մարզիկներ, մարդ	501	101	400
Զբաղվածներ, մարդ	5 219	2 715	2 504
նրանցից՝ զիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ զիտության դոկտոր	-	-	-
զիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	207	154	53
բժիշկներ	22
միջին բուժանձնակազմ	55
Գործազուրկներ , մարդ	497	229	268
Մոցիայական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 970
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	431	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	34 086
թատրոն	-	-	-
համերգ	-	-	-
թանգարան	360
Իրավական ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	38	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	22	X	X
միջին ծանրության	11	X	X
ծանր	5	X	X
առանձնապես ծանր	0.0	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: